

Դրամաշնորհային հաշվետվություն N_2_

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	«Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ»
Դրամաշնորհի N	ԴՏՊ-1032-11002/22 Արմավիր
Դրամաշնորհատու կազմակերպություն	ՀՀ ԱՍՀՆ
Դրամաշնորհառու կազմակերպություն	«Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ
Ծրագրի իրականացման ժամանակահատված	01.01.2022-31.12.2022
Հաշվետու ժամանակահատված	01.04.2022-30.06.2022
Ներկայացման օր	06.07.2022
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	Նաիրա Առաքելյան, ՀԿ Նախագահ

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում)

շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Ծրագրի հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները.

- **Շահառուների կարիքների գնահատում.** Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 3 նոր շահառուների կարիքների գնահատում համապատասխան մեթոդաբանությամբ, որի արդյունքում ստացել ենք հստակ նկարագիր շահառուի կարիքների վերաբերյալ: Նրանք Արմավիր քաղաքի բնակիչներ են՝ տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձիք:
- **Անհատական սոցիալական ծրագրի մշակում.** Նոր գնահատված շահառուների համար սոց.աշխատողի գլխավորությամբ թիմի կողմից մշակվել է յուրաքանչյուր շահառուի անհատական սոցիալական ծրագիր, որի արդյունքում յուրաքանչյուր շահառուի համար արդեն առկա է հստակ ծրագիր/պլան, որի հիման վրա մատուցվում են անհրաժեշտ ծառայությունները:
- **Շահառուների հետ պայմանագրերի կնքում.** Կարիքները գնահատված շահառուների հետ կնքվել են ծառայությունների մատուցման պայմանագրեր, որը թույլ է տալիս ունենալ իրավական կարգավորում ծառայություն մատուցողի և ծառայություն ստացողի միջև:
- **Ամենօրյա խնամքի ծառայությունների մատուցում.** Ըստ շահառուի հետ կնքված պայմանագրի, ծառայությունների մատուցման ժամանակացույցի և անհատական սոցիալական ծրագրի՝ ծրագրի հաշվետու ժամանակահատվածում շահառուներին մատուցվել են խնամքի անհրաժեշտ ծառայություններ շահառուների տանը՝ կենցաղային սպասարկում, բժշկական օգնություն և սպասարկում, սոցիալական խորհրդատվության տրամադրում: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է մեկ մշակութային միջոցառման մասնակցություն. տնային խնամք ստացող 12 տարեցներ այցելեցին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն և մեծ բավականություն ստացան Ժիրայր Անանյանի «Տաքսի-

տաքսի» կատակերգությունից, որը բեմադրվել էր Նորքի տուն–ինտերնատի բնակիչների կողմից:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Ծրագրային բոլոր գործողությունները հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են համաձայն աշխատանքային պլանի:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ծրագրային նախատեսված արդյունքները հետևյալ չափով.

- Ամսական 45 տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց տնային խնամքի ծառայությունների մատուցում,
- Սոցիալական ծառայության տրամադրում խնամքի կարիք ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց,
- Մեկ մշակութային միջոցառման մասնակցություն:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Հաշվետու ժամանակահատվածում մատուցվող ծառայությունների մասին տեղեկատվություն է դրվել ԱԶԿ ՀԿ-ի սոցիալական էջում

<https://www.facebook.com/armavirdc/posts/10166005435720704>

<https://www.facebook.com/armavirdc/posts/10166064701970704>

<https://www.facebook.com/armavirdc/posts/10166192609345704>

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի իրականացման էական խոչընդոտներ չեն գնահատվել:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

- Ծառայությունների մատուցում խնամքի կարիք ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց,
- Նոր շահառուների դեպքում՝ կարիքների գնահատում, անհատական սոցիալական ծրագրի կազմում, պայմանագրերի կնքում:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Սոցիալական աշխատողը 5 շահառուի աջակցել է սոցիալական նպաստի համար անհրաժեշտ փաստաթղթերը և դիմումները ներկայացնել Արմավիրի ՄՍԾ: Մեկ շահառուի սոցիալական աշխատողը աջակցել է աջակցող միջոցների ստացման հարցում:

Սոցիալական աշխատողը մեկ տարեցի օգնել է ընդգրկվել Հայկական Կարմիր Խաչի առաջարկվող ծրագրերում, որի շրջանակներում ստանում է պարենային փաթեթներ:

Բուժքույրը կազմակերպել է վիրաբույժի այցը տարեցի բնակարան, հետազոտման նպատակով, քանի որ տարեցն ուներ հենաշարժողական խնդիր: Կատարվեց հետազոտություն և նշանակվեց համապատասխան բուժում: Սոցիալական աշխատողի և բուժքրոջ աջակցմամբ երկու տարեցներ, որոնք ունեին առողջական խնդիրներ, ստացան իրենց հասանելիք ստացիոնար բուժումը Արմավիր ԲԿ-ում՝ պետպատվերի շրջանակներում:

ԱԶԿ ՀԿ նախագահ՝



Ն. Առաքելյան